

Թիւ 28217  
Մայիս 27, 1988

Մեծայարգ

Տիար Ռիչըրտ Նորսիկեան  
Տնօրէն Հ.Բ.Ը. Միութեան  
Ալեք Մանուկեան Վարժարանի  
Մառւթիլա.

Յարգելի Տիար Նորսիկեան,

Առացած ենք Մայիս 20, 1988 բուշեիր մեր Խոմակը, որով մեզ կը հրաւիրէք Վարժարանի Վկայականաց բաշխման հանդէսին՝ որ տեղի պիտի ունենայ սիրակի ծունը 5, 1988ին:

Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք մեզի ուղղուած այս հրաւիրին համար, ասկայն կը ցաւինք որ պիտի չկարնենաք ներկայ գանուիլ:

Այս առիթ կը փափաքինք մեր գնահատնքը արժանազրել Հ.Բ.Ը. Միութեան Ալեք Մանուկեան Վարժարանի խնամակալութեան, անօրէնութեան ու ուսուցչական կազմին յանձն առած նուրբեալ նախարդիւնառը աշխատնքին համար Հաճնցէք մեր շնորհաւորութիւնը Փոխանցել Վարժարանի շրջանաւարտ աշակերտներուն:

Կ'աղօթենք որ Տէրը իր մշտական նովանիրն ներքեւ պահէ մեր բոլոր կրթական հայաստութիւնները և իր օր նուրբիւններով զօրացնէ անոնց պատասխանառուներն ու պաշտօնեանները:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ՄՐՁԵԳԻՍԱՌՊՈՍ  
Առաջնորդ



22001 Northwestern Highway, Southfield, Michigan 48075 (313) 569-2988

Մայիս 20, 1988

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան  
Առաջնորդ Ամերիկահայոց Արեւելեան թեմի  
նիւ Եորք, Ն.Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Հ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան Վարժարանի 6-րդ ընթացաւարտ  
դասարանի վկայականներու բաշխման հանդէսը տեղի ունե-  
նայ Կիրակի, Յունիս 5, 1988, կ.ե. ժամը 4:00-ին, Ս. Յովհ.  
Մկրտիչ Եկեղեցւոյ Մշակութային Սրահին մէջ, Սառւթֆիլտ, Մի-  
շիկըն:

Յանուն Հ.Բ.Ը.Մ. Ալեք Մանուկեան Վարժարանին, պատիւ  
ունիմ Զեզ հրաւիրելու իբրեւ մեր յարգարժան հիւրը Վկայական-  
ներու Բաշխման Հանդէսին:

Մաղթելով Զեզ արեւշատութիւն, կը մնամ,

Մատշելով ի համբոյր Սուրբ Աջոյդ՝

*Ռիքարդ Շուրտֆիլդ*  
Ոհջործ Սորսիկեան  
Տնօրէն

Accredited By University Of Michigan And Independent  
Schools Association Of The Central States

Gifts to this institution are deductible for estate and income-tax purposes



# ԱՐԵՎԱԴՅԱԹՐԵՎՈՒԹՅԻՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Փետրուար 22, 1989

Հոգեշնորհ

Տ. Փառէն Ռ. Վլդ. Աւետիքեան

Հովհի Ս. Ցովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ

Նախագահ Ծխական Խորհուրդի

Սառություն.

Սիրելի Հայր Փառէն,

Մօտ երկու ամիս առաջ Առաջնորդ Սիրազան Հայրը զիս Ս. Վարդան Մայր Տաճարի  
լուսարարապետ նշանակեց:

Սուրբ Վարդան Մայր Տաճարը հայկական կառուցուածքով ու ոճով շինուած, ինչպէս  
Թէքէեան կ'ըսէ. «Պարզ ու խորոնկ, մութ ու լոյս» տաքուկ մթնոլորտով սրբավայր մըն է:  
Օտարներ երբ եկեղեցի կը մտնեն՝ հայկական ճարտարապետութեան ու մեր եկեղեցւոյ հմայիչ  
մթնոլորտին վրայ կը հիանան: Ս. Վարդան Մայր Տաճարը սրբազան կոթող մըն է, որմով մենք  
ազգովին պէտք է հպարտ ըլլանք եւ անոր վրայ գուրգորանք:

Անշուշտ Մայր տաճարի ճարտարապետութիւնն ու մթնոլորտը բաւարար չեն ըսելու համար  
որ Ս. Վարդան Մայր Տաճարը կատարեալ է: Սակայն կարելի է ըսել՝ նեկայանալի ու վայելու  
է: Բայց եւ այնպէս կրնայ աւելի լաւ, աւելի վայելու և աւելի ներկայանալի ըլլալ: Ինչպէս  
գիտէք բարեկառութիւնը համար սահման չկայ:

Աւելի վայելու դառնալու ազդակներէն մին է ծէսին հետ կապուած սպասներու  
կանոնաւորութիւնն ու ներդաշնակութիւնը:

Քանից ներկայ եղած եմ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած հանդիսաւոր թափօրներուն.  
միշտ թափօրներու համար մեր եկեղեցական եղբայրներէն խնդրուած է որ իրենց շուրջառները

Բետերմին բերեն: Ծատեր զանազան պատճառներով չեն կրցած՝ բերել եւ ստիպուած անոնց տրամադրուած են Մայր Տաճարի շուրջառները: Սակայն այդ շուրջառները բաւարար չեն եղած: Ինքս Ս. Քաղաք Երուսաղէմ ուսանած ու ձեռնադրուած ըլլալով՝ ականատես եղած եմ թափօրներու ընթացքին միօրինակ եւ միաձեւ շուրջառներու Աերդաշմակ տեսքին: Ինչ որ Ս. Քաղաքի մէջ տեսած եմ՝ կ'ոգեմ հանւ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ ի գործ դնել:

Որոշած եմ 30 հատ միաձեւ եւ միօրինակ շուրջառներ կարել տալ Մայր Տաճարէն Անքս տեղի ունեցող արարողութիւններու եւ թափօրներու ընթացքին գործածելու համար, որպէս զի թափօրները առաւել եւս վայելու ու ներկայանալի ըլլան:

Սոյն ծրագրի գործադրութեան համար մեր ժողովուրդի եւ ձեր եկեղեցւոյ բարոյական ու նիւթական օժանդակութեան կարիքը ունիմ: Սոյն գրութեամբս պիտի խնդրէի որ ձեր եկեղեցին ստանձնէր շուրջառ մը կարելու ծախսը՝ որ 350 (Երեք հարիւր յիսուն) տոլար է: Վատահ եղէք որ ձեր նիւթական օժանդակութիւնը մեծապէս պիտի գնահատուի:

Ձեր արեւշատութեան ու յաջողութեան բարի մաղթանքներով,

Աղօթակից

Բարգէն Վրդ. Անուշեան  
Լուսարարապետ Ս. Վարդան Մայր Տաճարի